«ՁԻ & ԷԼ ԻՆՎԵՍՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2019 թ. Ընկերության ռազմավարությունը նպատակաուղղված է եղել այնպիսի միջնաժամկետ նպատակների իրականացմանը, ինչպիսիք են Ընկերության ֆինանսական ցուցանիշների կայունության ապահովումը, ներդրումային շուկայում գործունեություն իրականացնող ընկերությունների շարքում ամրապնդվելը, Ընկերության ընդհանուր կապիտալի նվազագույն չափի և Ն1 տնտեսական նորմատիվի ապահովումը:

2019 թվականի դեկտեմբեր ամսին մուտք գործելով արժեթղթերի շուկա Ընկերությունը համագործակցել է արժեթղթերի շուկայում գործող ֆինանսական կազմակերպությունների հետ՝ հիմնական և ոչ հիմնական ծառայությունների շրջանակում:

Թեև արժեթղթերի շուկայում դեռևս նորաստեղծ գործնական կապերին՝ Ընկերությունը ֆինանսական շուկայում ստեղծված իրավիճակում ժամանակին իրականացված գործողությունների արդյունքում կարողացել է ապահովել Ընկերության ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվը:

Հաշվի առնելով այն հագամանքը, որ Ընկերությունն իր գործունեությունը սկսել է ուշ (Ընկերությունը գործունեության լիցենզիա է ստացել 2019թ սեպտեմբերի վերջին), ուստի կանխատեսվելիք ցուցանիշները որոշակիորեն շեղվել են նախատեսվածից: Այսպես, Ընկերության կանոնադրական կապիտալը նախատեսվում էր ավելացնել 10%-ով, ինչը իրականացվելու է 2020-2022թթ ժամանակահատվածում: 2019թ Ընկերության կողմից գործունեության ծավալման թերևս կարճ ժամանակահատվածում Ընկերությունը ոչ մեծ քանակով ներդրումային գործառնություններ է իրականացրել ՀՀ պետական պարտատոմսերով: Այսպես, 2019թ տարեվերջի դրությամբ Ընկերությունը պետական արժեթղթերով իրականացրել է 55.220.000 ՀՀ դրամի գործառնություններ: Պետք է նշել, որ դրանցից ոչ բոլորն են առայժմ ապահովել սպասվելիք եկամտի մակարդակը: Սակայն նախատեսվում է իրականացնել ներդրումային հիմնական և ոչ հիմնական ծառայությունների աճ 10%-

ով՝ 2020-22թթ ժամանակահատվածում: Ինչպես նաև նախատեսվում է նույն ժամանակահատվածում ավելացնել ընկերության շահույթի մակարդակը, որը 2019թ տարեկան ցուցանիշներով չապահովվեց: 2020-2022թթ Ընկերությունն իր առջև խնդիր է դրել ավելացնել զուտ տոկոսային եկամուտները, որոնք ձևավորվելու են ՀՀ պետական պարտատոմսերում ներդրումներից:

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ընդհանուր ակտիվները կազմել են՝ 61.894.000 ՀՀ դրամ, ընդհանուր կապիտալը՝ 59.122.000 ՀՀ դրամ, ընդհանուր պարտավորությունները՝ 2.772.000 ՀՀ դրամ :

Ընդհանուր պարտավորությունների և Ընդհանուր կապիտալի հարաբերակցության մակարդակը 2019 թվականի ընթացքում կազմել է 4.6%, իսկ ընդհանուր կապիտալի և ընդհանուր ակտիվների հարաբերակցության մակարդակը՝ 95.5%:

2019թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության արժեթղթերի պորտֆելում գերակշռում են երկարաժամկետ ՊՊ պարտատոմսերը: Ընկերությունն իր արժեթղթերի պորտֆելը համալրել է 10-30 տարեկան երկարաժամկետ պետական պարտատոմսերով, որը պայմանավորված է Ընկերության գործունեության երկարաժամկետ նպատակներով: Ընկերությունը մտադիր է շարունակել պորտֆելի համալրման գործընթացը և 2020թ. մասնակցել երկարաժամկետ և միջնաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի հերթական տեղաբաշխումներին:

Ընկերության արժեթղթերի պորտֆելը երկարաժամկետ պարտատոմսերով համալրելը դառնում է իրատեսական ոչ միայն ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների տեսքով պահելու, այլև այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող իրական

արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների տեսքով՝ առաջիկա տարիներին վաճառելու

և լրացուցիչ եկամուտ ստանալու համար:

2020-22թթ իր գործունեությունն ապահովելու նպատակով Ընկերությունը նաև մտադիր է միջոցներ ներգրավվել ՀՀ գործընկեր բանկերից՝ ռեպո համաձայնագրերի միջոցով:

Ընդլայնելով իր գործընկերների շրջանակը՝ 2019թ.-ի տարեվերջին Ընկերությունը սկսել է համագործակցությունը <<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ-ի հետ:

Պետական արժեթղթերով իրականացվող գործարքների արագ և որակով կատարման համար Ընկերությունը գործարքներն իրականացնում է CBANET համակարգի միջոցով:

Ընկերության ղեկավարությունը 2019թ նորամուտը արժեթղթերի շուկա համարում է ստարտային և նախատեսում է 2020 թվականի ընթացքում ակտիվ աշխատել արժեթղթերի շուկայում՝ ներգրավվելով պահի դրությամբ բանկային համակարգում գոյություն ունեցող ազատ ռեսուրսները և տեղաբաշխելով դրանք հիմնականում պետական պարտատոմսերում:

Ընկերությունն իր կադրային քաղաքականությունը կառուցում է երկարաժամկետ համագործակցության, աշխատակիցների նկատմամբ խրախուսման սկզբունքների հիման վրա:

Ընկերությունը ուշադրություն է դարձնում սեփական կադրերի պատրաստման և վերապատրաստման աշխատանքներին, որը թույլ է տալիս աշխատակիցներին յուրացնել փոփոխվող օրենսդրական դաշտը, ուսումնասիրել գործընկերների հետ համագործակցության ուղիները:

Ընկերությունը խրախուսում է նաև աշխատակիցների մասնագիտական որակավորումը և ձգտում է նրան, որ բոլոր աշխատակիցներն ունենան համապատասխան որակավորում: Նշենք, որ Ընկերության գործունեության հետ առնչվող բոլոր աշխատակիցներն ունեն բարձրագույն կրթություն, համապատասխան բարձր որակավորում և արժեթղթերի ոլորտում աշխատելու փորձ:

Գործադիր տնօրեն՝ Գ.Նալբանդյան

Գլխավոր հաշվապահ՝ Ա. Ասատրյան

«ՇԻՐԱԿ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
SHIRAK LIMITED LIABILITY COMPANY
«Ջի & էլ Ինվեստ»
«G & L INVEST»
05549108
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ • REPUBLIC OF ARMENIA